

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS
Armenian Monthly

ISSN 1682-5446

**Պարոն նախագահ,
Պարոն վարչապետ,
Ամոթ է մեր ազգի համար
Այս ի՞նչ վիճակ է
Հայ ժողովրդին հանգիստ թողե՛ք**



178, Հունիս 2013 թ. No 178, June 2013 شماره ۱۷۸ تیر ماه ۱۳۹۲

Այս համարում

Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	6
3- Արցախ.....	7
4- Արեւմտյան Հայաստան.....	8
5- Միջազգային.....	9
6- Հասարակական.....	12
7- Մշակույթ.....	13
8- Խոհեր.....	17
9- Գծանկարչություն.....	17
10- Հայերեն-պարսկերեն առաձանձի.....	17

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-3
----------------	-----



Ճապիկի առաջին էջում՝ ՀՀ-ում Գազի գնի բարձարման առիթով

Վերջին էջում՝ Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի «Հայ Պետականության Պատմություն»-ը 7 հատորով

Համար 178, Հունիս 2013 թ.

No. 178, June 2013

ماهنامه لویس - شماره ۱۷۸ تیر ۱۳۹۲

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Էներգետիկայի նախարարը և Իրանի դեսպանը իրարամերժ բաներ են ասում. Ո՞վ է ճիշտ

Հունիս 12, 2013 | 20:45



Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը պնդում է, որ ինքը ճիշտ է ասել և չի ստել պատգամավորներին Իրանից ներկրվող գազի գնի հետ կապված: Այս մասին այսօր՝ հունիսի 12-ին, Ազգային ժողովում, Ալեքսանդր Արզումանյանի հարցին ի պատասխան, ասաց Արմեն Մովսիսյանը:

«Իրանի գազատարն ունի 700մմ տրամագիծ, կոմպրեսորային կայանը թույլ է տալիս 36 մթնոլորտ ճնշում: Հաշվարկի խնդիր է, թե ինչքան գազ կարելի է բերել: Նա թույլ է տալիս բերել 2.3-2.4 մլրդ խմ գազ: Մեր ներքին պահանջարկը 2 մլրդ խմ գազից չի անցնում: Հնարավորություն կա լրացուցիչ կոմպրեսորային կայան դնելու և գազի ծավալը հասցնելու մինչև 3 մլրդ: Սա գուտ հաշվարկի խնդիր է, որեւիցե դեսպան, որեւիցե այլ մարդ չի կարող դա փոխի, որովհետև սա փաստ է», - ասաց նախարարը:

Հիշեցնենք, որ Արմեն Մովսիսյանը հայտարարել էր, թե Իրանը մեզ գազ է մատակարարում շատ ավելի բարձր գնով, և այդ գինն աճելու է, և երկրորդը այդ խողովակաշարը, որը գազ է մատակարարում Հայաստանին, լիովին բավարարում է կարիքները բավարարելու համար: Դրանից հետո Իրանի դեսպան Մոհամադ Ռեիսին հայտարարել էր, որ Իրանը պատրաստ է իր հնարավորությունների սահմաններում աջակցել Հայաստանին գազ ներկրելու հարցում, սակայն Հայաստանը պետք է որոշի՝ օգտագործել իրանական գազը որպես այլընտրանք, թե՛ ոչ: Նա նաև նշել էր, որ ցավոք սրտի, այն ժամանակ, երբ մենք կառուցում էինք հայ-իրանական խողովակաշարը, որոշվեց տրամագիծը լինի ոչ մեծ, որը հնարավորություն չի տալիս ավելի մեծ ծավալով գազ մատակարարել: Ալեքսանդր Արզումանյանը հարցնում է նախարարին՝ «դուք պնդո՞ւմ եք ձեր ասածը, եթե այո, ինչո՞ւ է ստում Իրանի դեսպանը, եթե ոչ, ինչո՞ւ էք դուք մեզ թյուրիմացության մեջ գցել»:

Արմեն Մովսիսյանը Ազգային ժողովում ունեցած իր ելույթով փաստեց որ չի տիրապետում Էներգետիկայի հարցերին. Երբ ռուսական գազը թանկացվում է 20 տոկոսով, նա պարտականություն ունի որպեսզի բանակցի պարսկական կողմի հետ, հետևելով մանավանդ Իրանի դեսպանի արտահայտության կապակցությամբ ավելի էժան գազի գնման հարցով: Նախարարը հայտնել է թե տեղյակ չէ դեսպանի արտահայտության մասին, անկախ դրանից նախարարը պիտի ընդառաջ գնար և պարսկական կողմի հետ բանակցեր:

Իրանահայ Շամայնք

Ազգային-եկեղեցական ժողովի փոխարեն, Բեյրութում կրկին կայացավ կուսակցական ժողով

«Իրանահայեր» լրատվական ցանց
18/06/2013 12:35:00



Հունիսի 12-15-ը, Անթիլիասում, Լիբանան, Արամ Ա. կաթողիկոսի նախագահությամբ, կայացավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ընդհանուր ժողովը:

- Չորսօրյա ժողովի օրակարգերն էին.
- ա- Ազգային Կենտրոնական վարչության Քաղաքական և Կրոնական ժողովների գործունեության քննարկում,
- բ- Քրիստոնեական դաստիարակություն,
- գ- Հայեցի կրթություն,
- դ- Հայ Դատ,
- ե- Երիտասարդություն,
- զ- Միջեկեղեցական հարաբերություն:

Յուրաքանչյուր չորս տարին մեկ գումարվող սույն ժողովում Թեհրանի հայոց թեմն, ըստ Կանոնադրության, ունի տասը ներկայացուցիչ, ովքեր պիտի ընտրվեն ԹՀԹ Պատգամավորական ժողովի կողմից: Սակայն, ինչպես անցյալում, Դաշնակցություն կուսակցությունը շարունակելով ընտրակեղծիքների ու մենատիրական իր արշավը, արհամարելով ժողովի համազգային բնույթը, թույլ չտվեց ընդդիմադիր կողմից ոչ մի ներկայացուցիչ ընդկրգվի հիշյալ ցանկում՝ ստեղծելով զուտ կուսակցական կազմ, կարծես կուսակցության Ընդհանուր ժողովի խնդիր կար և ոչ թե ազգային:

Երևույթն այնքան տգեղ էր, որ անգամ կուսակցականները չհամբերեցին ու «ընտրված» 10-ից 5-ը հրաժարվեցին, որից հետո, անձնափոխանորդներով հանդերձ, ընդամենը ութ հոգի Թեհրանից մեկնեցին Անթիլիաս, որոնցից մեկը Վարդան Վարդանյանը, ընդհանրապես, կապ չունեի ներկայացուցչական կազմին և Լիբանան էր մեկնում Արամ Վեհափառի հրավերով, իսկ թե՛ ո՛ւմ հաշվին, մեզ հայտնի չէ: Մեզ հայտնի չէ նաև այն պարագան, որ Վեհափառը Վարդանյանին որպես իր անձնական հյուրն էր հրավիրել, թե շրջանցելով ԹՀԹ Պատգամավորական ժողովին, սեփական նախաձեռնությամբ, փորձել էր լրացնել Թեհրանի կիսատ պատվիրակությունը: Նամանավանդ, որ հյուրի հանգամանքով Անթիլիասում գտնվող Վարդան Վարդանյանը, վերջում «ընտրվել է» որպես Ազգային ընդհանուր ժողովի Կենտրոնական վարչութեան Քաղաքական ժողովում Թեհրանի հայոց թեմի ներկայացուցիչ:

Այսպիսով, անոթալիորեն, ընդամենը երկու ամիս առաջ ընտրված պատվիրակության կեսը հրաժարվում էր կատարել կուսակցության կողմից իրեն պարտադրվող առաքելությունը, իսկ այդ բոլորի գլխին ավելորդ բարդություն էր Թեմական խորհրդի ատենապետ՝ Էդվարդ Բաբախանյանի անհասկանալիորեն Անթիլիաս չմեկնելը, ինչը տարբեր մեկնաբանությունների առիթ էր տալիս և ամենից առաջ կրկին օրակազ բերում Սրբազան Հոր՝ Ս. Մեպուհ արք. Մարգարյանի, և Դաշնակցության միջև առկա հակասությունների հարցը:

Կարևոր է մատնանշել, որ Թեհրանի հայոց թեմի գործադիր մարմնի՝ Թեմական խորհրդի, անդամներից ոչ ոք չէր մասնակցում Ազգային ժողովին:

Իսկ եթե Անթիլիասին ենթակա բոլոր թեմերն էլ Թեհրանի հայոց թեմի նման են ընտրել իրենց ներկայացուցիչներին ու նույն կերպ են նրանց ճամբել Ազգային ընդհանուր ժողով, ապա պիտի վկայել, որ նրանք լուրջ չեն վերաբերվում այդ ժողովին, որ այն ավելի շուտ ցուցադրական մի հավաք է, քան որոշակի նպատակ հետապնդող մի ժողով:

Ամենայնդեպս, մեկ բան հստակ է, որ Թեհրանից Անթիլիաս ժամանած պատվիրակությունը չէր ներկայացնում Թեհրանահայությանը, այլ, ընդամենը, նրա անունով ներկայացվող, մեծասամբ կուսակցական, մի խումբ:

Հիշատակված Թեհրանահայ պատվիրակությունը, իր կամքից անկախ, անկարող էր առաջ քաշել այնպիսի հարցեր, որոնք հաշվի առնելով սփյուռքյան այժմու պայմաններն ու հրամայականները ու նաև առկա մարտահրավերները, Հայ Ազգի և Եկեղեցու միասնության ամրապնդման նպատակով դրվեին սեղանի վրա, գոր օրինակ՝ ա- Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին վեր դասել որևէ տեսակ խմբակային շահից և եկեղեցու նվիրյալներին հորդորել՝ ամենաիմնական առաքելությունը համարել ազգի զավակների միջև միասնության հիմքեր ստեղծելը և միասնություն քարոզելը:

բ- «Ամենայն Հայոց» տիտղոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աներկբայելի մենաշնորհն է. մեկընդմիջտ վերջակետ դնել Անթիլիասի կողմից այդ տիտղոսից չարաշահելու հարցին՝ հայկական դաշտում և օտարների մոտ:

գ- Որոշակի և հստակ քաղաքականություն ճշտել և ծրագիր մշակել աղանդավորների քայքայիչ գործունեության դեմ պայքարելու համար:

դ- Հեռու աժանագին, լուգունգային մոտեցումներից, ՀՀ իշխանություններին պահանջներ ներկայացնել Հայաստանի կայունության ու զարգացման համար, մանավանդ ավերիչ արտագաղթը կասեցնելու ուղղությամբ:

ե- Հայ Դատը համարել համահայկական մտահոգություն և գերհարց և այն զանազանեղ Դաշնակցություն կուսակցությունից և բարոյապես ու նյութապես պաշտպանել այդ ոլորտին նվիրված բոլոր անհատներից, կառույցներից ու կազմակերպություններից և հրաժարվել մինչ այժմ կատարվող խտրական և հատվածապաշտ գործունեությունից:

Հիշեցնենք՝ Ազգային Ընդհանուր ժողովը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության բարձրագույն մարմինն է և գումարում է չորս տարին մեկ, ուր քննարկման են դրվում ազգային-եկեղեցական կյանքի հետ առնչվող հիմնահարցերը, գնահատական տրվում Ազգային Կենտրոնական վարչության Կրոնական և Քաղաքական ժողովների չորսամյա գործունեությանն ու կաթողիկոսության ենթակա թեմերի գործադիր իշխանությունների կատարած գործունեությանը և ըստ այնմ կատարում իր թելադրություններն ու առաջարկությունները առաջիկա տարիների գործունեության համար:

Սառնայի Ս. Յովհաննէս (Մարիխնա) եկեղեցին փլուզու վտանգի առաջ



Ատրպատականի Հայոց Թեմը, հնապահպանման Պետական Հիմնարկի հետ միասնաբար, կարելին ի գործ է դնում, անվտանգ պահելու համար ազգապատկան այն կալածքներն ու եկեղեցիները, որոնք նաև Իրանի պատմութեան համար արժէք են ներկայացնում իրենց հնութեամբ, իբրև մշակութային ժառանգություն:

Կիրակի 9 Յունիս 2103-ի յետ միջօրէին, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Կրդ. Չիֆթճեանը եղաւ Սալմաստի Սառնա գիւղում, այցելելով Ս. Յովհաննէս եկեղեցին, որը տեղացի թէ հայ մարդկանց ծանօթ է «Մարիխնա» ՔՄար Իվխաննա - Ս. Յովհաննէս՝ անունով:

Ստորեւ Թեմակալ Առաջնորդի տեղագրութիւնը իր գրչով.-

«Սառնայի կանգուն ու գործող եկեղեցիներից է համարում Մարիխնան, 1600-ական թերի կառոյց, որովհետև գիւղի միւս եկեղեցին՝ քարաշէն Ս. Աստուածածինը արդէն խոնարհուած է Սալմաստի մեծ երկրաշարժին Ք1930թ.Ձ, եւ ապա անձրեւների ու այլ պատճառներով թափուել են պատերից մասեր, իսկ կտուրից հոսող ջրի հետեւանքով մեծ ճաք է առաջացել արեւմտեան պատի մէջ:

«Մարիխնան 8x10 մետր ներքին տարածութեամբ ու 6 մետր բարձրութեամբ հողաշէն եկեղեցի է, փայտածածկ ու գերանազարդ կտուրով: Ուղղահայեաց չորս գերաններ ատեանի կենտրոնական մասից բարձրանում են դէպի կտուր, իսկ տաս հատ էլ պատերի տակով են դուրել պահելու համար տանիքի ծանրութիւնը: Կենտրոնից բարձրացած գերաններից մէկի խոյակի վրայ, բարձր մասում, կայ «1925 Ապրիլի 17» արձանագրութիւնը, որը եկեղեցու վերանորոգութեան եւ մանաւանդ գերանների յաւելումով կտուրի ամրապնդման թւականը պէտք է լինի:

«Խորանի աջ ու ձախ կողմերում ունի մէկական արանդատուն: Հիւսիսային պատի մէջ, ձախակողմեան արանդատան դրան մօտ կայ մկրտարան: Եկեղեցին սպիտակացած է ծեփով: Ամրան եղանակին զուգադիպող տօների առիթով եկեղեցական արարողութիւններ եղել են այստեղ: Ուստի, եկեղեցին ունի նաև վարագոյր, հաւատացեալների համար երեքական հոգանոց փայտեայ նստարաններ, մոմավառութեան յատուկ երկաթեայ արագամաններ, ելեքտրական հոսանքի գծեր եւ յարակից պիտոյքներ:

«Գործող եկեղեցի այցելելու մեծ յոյսով մօտեցանք մեծ բակ ունեցող այս եկեղեցուն: Բայց շատ բան էր փոխուել մեր անցած այցելութիւնից, Քշուրջ մի տարի առաջ՞, մինչև այսօր: Լայն շրջափակի չորս փեղկանի դրան ժանգոտած կրդպանքը հազիւ բանալ յաջողած, վայրի խոտերի «ծով»ի միջից դժարութեամբ հասանք բակի հարաւ-արեւմտեան անկիւնում գտնուող հողաշէն քառակուսի այն սենեակին, որը Ս. Յովհաննէս եկեղեցին էր: Դրան առաջ նետուած նստարանները ու մի քիչ բաց մնացած դուռը ժխտական ազդեցութիւն գործեցին մեր վրայ:

«Դուրը հազիւ բացած, ճիշտ մուտքին, շուրջ 3 մետր խորութեամբ փոս էին քանդել, գանձ գտնելու յոյսով: Եկեղեցու ներսում գրեթէ քայլելու հնարաւորութիւն չկար, խորանի ամբողջ բեմը քանդուած ու հողը եկեղեցու ատեանի մէջ լցած լինելու պատճառով: Քանդարարների ուշադրութեան կենտրոնում էին յայտնուել ոչ միայն եկեղեցու գետինն ու բեմի բարձրութիւնը, այլ խորանի աջ ու ձախ կողմերի խորշերի յատակները, ընդհանրապէս եկեղեցու պատերում գտնուող խորշերն ու մկրտարանը, ինչպէս նաև երկու արանդատուները, որոնք գրեթէ ամբողջութեամբ քանդուել էին պատերով ու յատակով:

Եկեղեցու վարագոյրը վերուստի ի վայր պատուած, իսկ պատերի միջի խորշերի քանդումների հետեւանքով անձրեւի ջուրի ներս թափանցելու ճանապարհ էր բացել: «Գիւղի կենտրոնում գտնուելով, եկեղեցին բնակիչների ամենօրեայ հարեւանութիւնն է վայելում է: Մակայն, ոչ ոք տեղեակ չէր թէ ե րբ եւ ինչպէ՞ս են քանդում եկեղեցու ներսը, աննկատ մնալով:

«Եկեղեցու դրսի կողմը, բնականօրէն ներսում կատարուող քանդումների ազդեցութիւնն է կրել: Յարդացելի մակերեսից մեծ բաժիններ տեղ-տեղ թափուել են, հեշտացնելով եկեղեցու կառոյցի ընդհանուր թուլացումը տեղացող անձրեւների բերումով: Ներկայ հանգրուանին, Մարիխնան փլուզու վտանգի առաջ է կանգնած»:

Վերադառնալով Առաջնորդարան, Թեմակալ Առաջնորդը Թեմական Խորհրդի հետ համագործակցաբար, պետական հնապահպանման մարմինների ուշադրութիւնը հրաւիրող նամակներ յղեց, որպէսզի մշակութային հարստութիւն նկատուող կառոյցների եւ ազգային ժառանգութիւնների նկատմամբ հսկողութիւնը առաւել եւս խստացուի:

Սրբոց Հռիփսիմեանց տօնը դազւիմում

Իրանահայեր Լրատու Ցանց



Հայոց պատմութեան, եկեղեցական կեանքի ու հաւատքի առաքելութեան մէջ փայլող ու նահատակութեան վկայութեամբ իրենց կեանքը կնքող միանձնուհիների տօնն էր, որ հանդիսաւորապէս յիշատակւեց երկուշաբթի 27 մայիսին, Ղազւիմում: Մի տօն, որ անհնար էր անշուք, անյիշատակ ու անյայտ անցներ: Մի տօն, որի առաջ անկարելի էր չխոնարհել: Եւ մի արձագանք, որի դարաւոր ալիքներից յառաջացող հնչիւնների վկայութեան ու պատգամին առաջ, խոնարհաբար բացւելով այն չըմբռնելով՝ անխղճութիւն եւ անզգամութիւն էր վստահաբար:

Անհետացող որմանկարներ Մահլամի Ս. Գեորգ եկեղեցում



Հինգշաբթի 16 Մայիս 2013-ին, Ատրպատականի Հայոց Թեմի կալւածային ներկայ վիճակի հետազօտութեան նպատակով, Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեանը մեկնեց Մալմաստի: Նրա այցելած առաջին եկեղեցու «Ս. Զօրէն»ի Ֆկառուցւած 1641թ.ին եւ Մալմաստի երկրաշարժին խոնարհուած

1930թ.ին», արտաքին շրջապատի մասամբ քանդուած կացութիւնը ստուգելուց յետոյ, Թեմակալ Առաջնորդը ուղղեց դրա կողքի Ս. Գեորգ եկեղեցին: Ստորեւ ներկայացնում ենք նրա արձանագրած տեղագրութիւնը.

«Մահլամի քուրդ բնակչութիւնից ստուգելով Ս. Զօրէնի պարսպի քանդումի մասին տրւած պատճառաբանութիւնները, իբրեւ թէ ներսում իրենց հօտերը արածեցնելու նպատակով “դուռ բացած լինել” ու գործ, հարկ եղած թելադրութիւնները կատարեցինք վերաշինութեան եւ անցանք կողքի Ս. Գեորգը:

«Անցած անգամից առ այսօր աւելի էր խոնարհւել այն, տեղացած անձրեւների պատճառով: Սակայն քանդիչ ձեռքերի հետքերը եւս երեւում էին յատկապէս ներքին պատերի վրայ, ինչպէս նաեւ շրջափակում գտնուող հանգիստի քարերի բացայայտ տեղաշարժերով, որոնց նպատակը մէկ է թաղւած գանձ յայտնաբերել:

«Եկեղեցու ներսում քանդումային աշխատանքները սակայն, այս պարագայում “դրական” մի գործ էին կատարել, խորանի կամարների ծեփերը թափելով, եւ տակից նախկին որմանկարները երեւան բերելով...: Թէեւ դրանք արւեստի գլուխ գործոցներ չեն, եւ սիրողական նկարիչի կողմից նկարւած լինելով նոյնիսկ ստորագրութիւն չեն կրում, սակայն 1711թ.ին կառուցւած հողաշէն ու փայտածածկ եկեղեցու անցեալի պատմութեան քաղցր օրերը յուշող յիշատակներ են:

«Խորանի աջ ու ձախ կողմերին նկարւած այս պատկերները, որոնք հակառակ բազմաթիւ տարիներ առաջ ծեփւած ըլլալուն, անցնող երկար տարիների խոնաւութեան դիմադրել էին, պահելով գոյների պարզութիւնը եւ հարազատութիւնը: Մեր ենթադրութեամբ, այս գոյգ որմանկարները չորս Աւետարանիչներից երկուսի պատկերներն են: Պատկերների մէջ երեւացող անձերին Աւետարանիչներ լինելը, իւրաքանչիւրի ձեռքում մէկական գիրք նկարւած լինելուց պարզ է: Վստահաբար եթէ դրանց երկու կողերում գտնուող կամարների ծեփերը քանդուեն, միւս երկու Աւետարանիչների պատկերները եւս ի յայտ կը գան: Ապա մենք աղօթեցինք ու հեռացանք Մահլամից, դարձեալ ամուր փակելով եկեղեցու դուռը...»:

Վերոյիշեալ անհետացող որմանկարների ու ընդհանրապէս Ս. Գեորգ եկեղեցու վերանորոգութեան համար Թեմակալ Առաջնորդի, Ազգային Իշխանութեան եւ Հնապահականման Պետական Հիմնարկի յառաջիկայ նիստի ընթացքում յատուկ օրակարգ պիտի յատկացուի:

Առաքել Դարիժեցու Թաւրիզի տան հետքերը Ղալայում

02/06/2013 18:42:00Թաւրիզ, Ազգային Առաջնորդարան

Թաւրիզեցի իւրաքանչիւր հայ արդար իրաւունքը ունի հպարտանալու իր քաղաքի անցեալի մեծանուն հայերի ցուցակը գլխաւորող, հայ մատենագրութեան ու պատմագրութեան վերջին, ու կարեւոր դէմքերից՝ Առաքել Դարիժեցու անունով:

Հայ Մատենագրութեան ծանօթ է Առաքել Դարիժեցին որպէս 17-րդ դարի №1602-1662՝ մեր պատմութիւնը գրի առած անձ, «ճնեալ ի Դարեժ» №Թարիզ, շուրջ 1590 թիւն:

Հալէպահայ հրապարակագիր-մտաւորական Լեւոն Շառոյեանը, հակառակ իր երկրի քաղաքական խառնակ ու անապահով կացութեան, գրել է «Թերթատելով Պարսկահայոց Արտազ Ամսագիրը» վերտառութեամբ երկարաշունչ մի յօդաձաշարք, որը հրատարակեց Բէյրութի «Ազդակ» օրաթերթում, 2013 Մայիս 17-24, անդրադառնալով Ատրպատականի Հայոց Թեմի անցեալ պատմութեանը, հասնելով մինչեւ մեր օրերը:



Վերոյիշեալ յօդաձաշարքի «Ե.» մասը յօդաձագիրը նւիրել է «Թարիզի Պարծանք» Առաքել Դարիժեցուն, այնտեղ նշելով թէ ինչ պայմաններում Դարիժեցի վարդապետը օրայ Փիլիպպոս Կաթողիկոսից պատւեր է ստացել գրելու ժամանակակից պատմութիւնը, որը պիտի ներառէր Շահ Աբասի կողմից հայոց բռնագաղթը եւ թուրք-պարսկական անվերջ յարձակումները Հայաստանի վրայ: Վերջապէս, նա մեծ դժարութիւններով իր «Պատմութիւն»ը աւարտում է 1662-ին, 9 տարիներ նւիրելով սոյն աշխատանքին, երբ արդէն ձերացել էր, ու ընդամենը 8 տարիներ ետք պիտի վախճանէր: Յօդաձագիրը նաեւ նշում է, թէ Առաքել Դարիժեցին մեր մատենագիրների լուսերամ շարքում միակը եղաւ, որ իր կենդանութեան գէթ իմացաւ իր հեղինակած գրքի տպագրութեան մասին: «Արդարեւ այս “Պատմութիւն”ը հրատարակուեցաւ 1669-ին, Ամսթերտամի մէջ, նշանաւոր տպագրիչ Ոսկան Վրդ. Երևանցիի կողմէ» №«Ազդակ» 21 Մայիս 2013»:

Յօդաձագիրը նաեւ ակնարկութիւն է արել թէ մեծանուն լեզուագետ Հրաչեայ Աճառեանը իր «Անձնանունների Բառարան»ում յիշում է, թէ Թարիզում իբրեւ ուսուցիչ վեց տարի պաշտօնավարած միջոցում, 1920-ական թերին, կնոջը՝ Սոֆիի հետ բնակւել են Առաքել Դարիժեցու բնակարանի փողոցում:

Միեւնոյն ակնարկութեանը հանդիպելով Հ. Աճառեանի «Կեանքիս յուշերից» հատորում, վերահրատարակած Թեհրան 2007-ին, Ատրպատականի

Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը հետազօտական այց տուեց Բերդաթաղ №Դալա՝ թաղամասի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցու կողքի փողոցը, որտեղ ապրել էր Հ.Աճառեանը, «երկու տուն ցածր յայտնի պատմաբան Առաքել Դարիժեցու տնից, որը բռնում էր նոյն փողոցի անկիւնը» Քնոյն, անդ, էջ 345»:

Թարիզից իր մեկնումի պահն էլ նկարագրելով, Հ. Աճառեանը դարձեալ ակնարկում է Դարիժեցու տան վայրին, ասելով. «մեր տնից երկու տուն վերեւ էր գտնւում, հայոց եկեղեցու նրբանցքի անկիւնում» Քնոյն, անդ, էջ 355»: Այստեղ նա պատմում է, թէ մեկնումի պահին, երբ կառքը արդէն հասել էր Դարիժեցու տան առաջ, այսինքն՝ փողոցի անկիւնը, մի երիտասարդ մօտենալով ասել է իրեն, թէ դերձակ Շիրմազանի տանը հայերէն մի լաւ ձեռագիր կայ: «Ի՛նչ ձեռագիր. ամբողջ Թարիզն արժէր ինձ համար: 1295-1298 թականներից մի ձեռագիր էր, որ գրել էր տւել հայոց Սմբատ Գ. թագաւորը: Արքայական մատենադարանի գրքերից էր, անասնաբուժութիւն» գրում է Աճառեանը Քնոյն, անդ, էջ 355»:

Կիրակի 2 Յունիս 2013-ին, նոյն նրբանցքը այցելեց Թեմակալ Առաջնորդը, ստուգելու Դարիժեցու բնակարանի պատմական վայրը: Նախկին բնակարաններից ոչ մէկը չի՛ մնացել այսօր: Իսկ նախկին «Արամեան» հայոց վարժարանի տեղում 1960-ականների սկիզբը բարձրացած ազգապատկան «Արամեան» շէնքը բարեխախտաբար Հ. Աճառեանի յիշած «եկեղեցու նրբանցք»ը անխախտ է պահել, իբրեւ հին բնակարանների թաղը, որի վերի անկիւնում փողոցի բերանը եղել է Դարիժեցու բնակարանը: Ներկայումս եկեղեցին իր շրջափակով մայր պողոտայից աւելի ցածր է, ճանապարհաշինութեան ընթացքում փողոցը բարձրացած լինելով: Սակայն, հնուց մնացած պատի հետքերն ստուգելով կարելի է ենթադրել, որ նախապէս էլ մի քիչ աւելի խոր էր եղել եկեղեցու տարածքը փողոցից, եւ մի քանի սանդուխներով են իջել դէպի «հայոց եկեղեցու նրբանցք»ը: Այստեղ գտնւած բնակարանին ակնարկում է Աճառեանը, երբ գրում է «Պատմագրեանի տան» մասին: Այս ազգանունի մէջ երեւցող «Պատմագիր»ը՝ Դարիժեցի Առաքել վարդապետն է: Ներկայիս այդ նրբանցքը փողոցի կողմից շատ ցածր լինելուն եւ եկեղեցու տարածքը դրսից պաշտպանելու համար, ամբողջովին փակւած է «Արամեան» շէնքի կառուցման ընթացքում, նոր հիւսած աղիւսէ պատով: Միայն եկեղեցու պատի հիւսիս արեւելեան անկիւնում երեւում է հին տների պատի մնացորդացը: Իսկ եկեղեցու պատի մէջ, նոյն թականներից մի տապանաքար կայ, 1196 հայկական թականը կրող, հետեւեալ արձանագրութեամբ. «ԱՅՍ Է Տ[Մ]ՊԱՆ ԹԱՐ/ՎԷՁՏԻ: ՕՉԱՆՃ/ԱՆԻ: ԿՈՂԱԿԻՑ ԹԱ/ԳՈՒՂ[Ի]ՈՅՆ: 1196 №1747»:

Թէ մինչեւ 1905 Թարիզում ապրում էին Դարիժեցու հարազատներից եւ նրա գերդաստանից մարդիկ, որոնք նոյնիսկ երիտասարդ էին, պարզ երեւում է Լիլւայի Ս. Սարգիս եկեղեցում գտնուող մի արձանագրութիւնից:

Խորանի առաջ, դասի մուտքը եկեղեցու ատենանից բաժանող փայտեայ ճաղատոր բազրիքը պատրաստուել է Պատմագրեան ընտանիքի նւիրատուութեամբ, յաւերժացնելու համար իրենց դեռատի դստեր յիշատակը: Բազրիքի աջ ու ձախ դռների վրայ թողւել է հետեւեալ արձանագրութիւնը. «ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌԻԿ/ՇՈՒՇԱՆԻԿ ՊԱՏՄԱԳՐԵԱՆ 1905 ԹԻԻ»:

Այսօր Պատմագրեան ազգանունը կրող ընտանիք կամ նոյնիսկ անձ չի՝ ապրում Ատրպատականի Հայոց Թեմում: Հաւանաբար գաղթել են բոլորը, եւ կամ մահացել են Թաւրիզում ու փակուել է նրանց սերնդական ուղին: Սակայն Դարիժեցին ու նրա «Պատմութիւն»ը միշտ պիտի մնան պարծանքը Ատրպատականի Հայոց Թեմին ու մասնաւորապէս իւրաքանչիւր թաւրիզեցու:

Լուրեր՝ Թեմական խորհրդի աշխատանքների եւ հանդիպումների մասին (25 մայիս - 2 յունիս 2013)

«Իրանահայեր» լրատվական ցանց
13/06/2013 19:09:00

Թեմական խորհրդի 2-րդ հանդիպումը՝ թեմի միութիւնների հետ



2013 թականի յունիսի 1-ին Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի հարւերով «Բաֆֆի» մարզա-մշակութային համալիրի սրահում տեղի է ունեցել թեմի կանանց, բարեգործական, եկեղեցական եւ արհեստակցական կարգավիճակ ունեցող 16 միութիւնների (բժիշկներ, ուսուցիչներ, ճարտարապետներ եւ այլն) հանդիպում-հիւրընկալութիւնը: Միութիւնների աշխատանքային բնոյթից ելնելով երկու խմբի բաժանուած 2-րդ խմբի հանդիպմանը ներկայ էին՝ Փերիոյ Կրթասիրաց, «Գիւլիզարդիայրենակցական», «Թեհրանի Հայ կանանց եկեղեցասեր», «Հայ կին» եւ իրեն կից «Արմենուի», «Անահիտ» եւ «Անի», «Իրանահայ Գրողների», «Ճարտարապետների եւ ճարտարագէտների», «Իրանահայ բժիշկների», «Իրանահայ ուսուցիչների», միութիւնների եւ «Աշխարհատեսների» թե՛ «Սասուն» եւ թե՛ «Զէյթուն» քաղաքամասերի կենտրոնների անձնակազմերը: Կայացած հանդիպմանը, Թեմական խորհրդի փոխատենապետ Արա Շահնազարեանի

ողջոյնի խօսքերից յետոյ, նա ներկայացնելով Թեմական խորհրդի անդամակազմին, հպանցիկ ձեռով անդրադարձաւ խորհրդի աշխատանքներին եւ ապագայ ծրագրաւորումներին, ապա առիթ տուեց ներկայ միութիւնների ներկայացուցիչներին ծանօթացնելու իրենց անձնակազմերին եւ հանդիպումը շարունակեց հաճելի մթնոլորտում : Հանդիպման ընթացքում առիթ ընձեռնեց խորհրդակցելու Ամանորեայ խրախճանքների կազմակերպման եւ այլ աշխատանքների իրականացման ձեւերի մասին: Խորհրդակցութիւնները ընթացան շինիչ առաջարկութիւնների ներկայացմամբ: Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ հիւրընկալութիւն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 30-ին Թեմական խորհրդի ներկայացուցիչները այցելել են «Սասուն» մանկապարտէզի նորակառոյց շէնքը, հետեւելու շինարարական աշխատանքների զարգացմանն ու առաջընթացին: Յունիսի 1-ին Թեմական խորհրդի անձնակազմը այցելել է «Սասուն» քաղաքամասի «Նայիրի» տարր. դպրոցին կից պատրաստուած համալիրը եւ «Ազգային գրադարան»-ը եւ մօտկից իրագեկ դարձել աշխատանքներին: Երկրի Կրօնական փոքրամասնութիւնների ներկայացուցիչների, որոնց շարքում նաեւ իրանահայութիւնը, քահանայ հայրեր, Թեմական խորհրդի եւ միութիւնների ներկայացուցիչների, մայիսի 30-ին Իրանի Իսլամական Յեղափոխութեան հիմնադիր Էմամ Խոմէնիի մահւան 24-րդ տարելիցի առիթով այցելել են նրա դամբարանը՝ յարգանքի տուրք մատուցելով նրա յիշատակին:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Թեմական խորհուրդը անցեալ 10 օրերի ընթացքում իր հերթական եւ շաբաթական երկու հանդիպումները գումարելուց բացի, ունեցել է մասնաւոր հանդիպումներ՝ ազգային հասարակական կեանքի առումով: 26 մայիսի 2013-ին Թեմական խորհուրդը հանդիպում է ունեցել 15-րդ նստաշրջանի Պատգամաւորական ժողովի դիւանի հետ եւ մի շարք հարցերի շուրջ մտքերի փոխանակում է կատարել: Նոյն օրը հանդիպում է գումարուել նաեւ 2013 թականին Անթիլիասում գումարուող Ազգային ժողովին, Թեհրանի թեմից մասնակցող պատգամաւորների հետ:

Թեմական խորհուրդը լիակազմ մասնակցել է Իրանի Իսլամական խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան պագտամաւոր դոկտ. Կարէն Խանլարեանի հրաւերով գումարուող խորհրդակցական հանդիպման, որը տեղի է ունեցել մայիսի 29-ին, ազգային առաջնորդարանի դահլիճում:

Հայաստան

Թուրքիա մեկնող հայաստանցիների թիվն աճել է հունվար-ապրիլ ամիսներին

Հունիս 19, 2013 | 00:04

Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2013 թվականի հունվար-ապրիլ ամիսներին կազմել է 15 264 մարդ: Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2013 թվականի հունվար-ապրիլ ամիսներին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը 3,9 տոկոսով աճել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմելով 15 264 մարդ: Այս թիվն իր հերթին 8.2 տոկոսով ավելին է 2011 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ: Միայն 2013-ի ապրիլին Թուրքիա է այցելել 4 528 հայաստանցի: Նշենք, որ 2012-ի ընթացքում Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը կազմել է 70 956:

Ռուսաստանը զենք է վաճառում Հայաստանի թշնամուն. Փորձագետ

Հունիս 20, 2013

Ռուսաստանն ավարտել է Ադրբեջանին մոտ 1 մլրդ դոլար զենքի մատակարարման գործարքը, այն տեղեկություններից հետո, թե Բաքուն իրականում տառապում է Մոսկվայի զենքի Էմբարգոյից: Այս մասին նշվում է փորձագետ Ջոշուա Կուլչերի հոդվածում, որը հրապարակվել է «Eurasianet.org» կայքում:

Յեղիսակը նշում է, որ գործարքներն իրականում կայացել են վերջին երկու տարվա ընթացքում, եւ դրանց մեծ մասի մասին կարծես թե ավելի վաղ նույնպես հաղորդվել է: Սակայն զենքը, ըստ ամենայնի, հասցվել է Բաքու վերջերս:

«Բայց մենք ապրիլին լսել էինք, որ Ռուսաստանը դադարեցրել է զենքի մատակարարումը Ադրբեջան, մասնավորապես, մի քանի ռազմական օդանավերի մասով»: Սակայն այս նորությունը չի հակասում այսօրվա հաղորդագրությանը՝ հաշվի առնելով, որ վերջինը վերաբերում է արդեն ստորագրված գործարքին:

Տվյալ պահին, ըստ Կուլչերի, «Հարավային Կովկասում ռազմական հավասարակշռության խախտումը» կարելի է Էվֆեմիզմ համարել:

«Ինչով է պայմանավորված առաքումների հարցում ձգձգումը, եւ ինչպես է այն հաղթահարվել, կարելի է միայն կռահել: Անկեղծ ասած, այս երեւույթը հերթական պատմությունից մեկն է, որը թույլ չի տալիս հասկանալ, ինչ է տեղի ունենում նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ռազմաքաղաքական առումով: Դիտարկենք փաստերը. Ռուսաստանը շատ զենք է տալիս Հայաստանին, քանի որ նա ռազմավարական դաշնակից է, սակայն միաժամանակ, սեփական շահից ելնելով, զենք է վաճառում նաեւ Հայաստանի նավթով

հարուստ թշնամուն՝ Ադրբեջանին, որի հետ հավանական է պատերազմը: Սա իսկապես շահավետ իրավիճակ է, բացառությամբ, սակայն, Կովկասի ժողովուրդների համար, որոնք երբեւէ կարող են դառնալ այդ զենքի զոհերը»,-գրել է Կուլչերը:

Գազպրոմի հետ դեռ գործարք չկա. Արմեն Մովսիսյան



Հունիս 19, 2013 | 16:22

«Գազպրոմի» նախագահ Ալեքսեյ Միլլերի հետ Մոսկվայում օրերս քննարկվել են «ՀայՌուսգազարդի» ՀՀ կառավարությանը պատկանող 20% բաժնեմասը ռուսական կողմին փոխանցելու հարցերը, սակայն որեւէ որոշում դեռ չի կայացվել: Այդ մասին այսօր՝ հունիսի 19-ին լրագրողների հետ ճեպագրույցում ասաց ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը:

«Որելիցե գործարք կատարված չէ, այս պահին բանակցություններ են ընթանում, բանակցությունների սեղանին դրված է 20 տոկոս բաժնետոմսեր տալ-չտալու հարցը, բայց բանակցությունների սեղանին դրված է ոչ միայն այդ հարցը, կան նաեւ այլ հարցեր»,-նշեց Ա. Մովսիսյանը:

Նրա տեղեկացմամբ՝ մինչեւ ամսվա վերջ բանակցությունները կավարտվեն: Ա. Մովսիսյանը հավաստիացրեց, որ կանեն այնպես, որ «ՀայՌուսգազարդում» 100% բաժնեմաս ստանալուց հետո «Գազպրոմը» կամայականությունների չդիմի, այլ Հայաստանին երկարատեւ ժամանակաշրջանի համար ապահովի կայուն գազամատակարարում:

Հիշեցնենք, որ «ՀայՌուսգազարդի» բաժնետոմսերի 80%-ը ներկայում պատկանում է «Գազպրոմին», 20%-ը՝ ՀՀ կառավարությանը:

Իրանը 6 տարվա ընթացքում Հայաստան է արտահանել ավելի քան 1.5 մլրդ քմ գազ

Հունիս 19, 2013 | 04:39

2012թթ ընթացքում իրանական գազի արտահանումը Հայաստան գերազանցել է 1.5 մլրդ քմ: Այս մասին ասվում է Իրանի Ազգային գազի ընկերության զեկույցում: Չեկույցի համաձայն՝ Իրանը 1.558 մլրդ քմ գազ է արտահանել հայկական էլեկտրաէներգիայի դիմաց: Միայն 2012-ին իրանական գազի արտահանման

ծավալը կազմել է 481 մլն քմ, հաղորդում է իրանական FARS գործակալությունը:



-2007Լախորդ շաբաթ Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ռեիսին հայտարարել էր, որ իր երկիրը պատրաստ է իր հնարավորության շրջանակներում աջակցել Հայաստանին՝ գազի մատակարարման հարցում: Ինչպես դեսպանն է ընդգծել, հայկական կողմը պետք է որոշի արդյոք իրանական գազը կիրառի որպես այլընտրանք ռուսականին, թե՛ ոչ:

Աղցախ

**Փորձագետ. Ղարաբաղյան
հակամարտության հարցում Իրանի
դիրքորոշումը չի փոխվի**

Հունիս 19, 2013 | 00:39

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում իրանցի ոչ մի գործիչ ստանդարտ հայտարարությունների շրջանակից դուրս չի գա: Մասնավորապես, հանուն խաղաղ կարգավորման ելույթներ կհնչեն, NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է իրանագետ Վարդան Ոսկանյանը: Երբ խոսքով Իրանի նոր նախագահ Հասան Ռուհանին Բաքու այցելելու դեպքում կընդգծի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պահելու անհրաժեշտությունը, իսկ Երեւանում նման հայտարարություն չի հնչի: «Շատ հաճախ ղեկավար գործիչների հայտարարությունները եւ իրական քաղաքական ուղղությունը չեն համընկնում: ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից Իրանի դիրքորոշումը, կարծում եմ, չի փոխվի», - նշել է Վարդան Ոսկանյանը եւ միաժամանակ բացատրել Իրանի կողմից միջնորդի դեր ստանձնելը՝ դա բացատրելով նրանով, որ Ադրբեջանը կասկածի տակ է դնում անգամ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում տարվող բանակցային ձեռնարկը: Ադրբեջանի համար միակ ընդունելի տարբերակը թուրքիային միջնորդական առաքելությամբ ներգրավելն է: Մակայն Թուրքիան ճիշտ կանի սեփական ներքին խնդիրները լուծի», - ամփոփել է Վարդան Ոսկանյանը:

Չիշեցնենք, հունիսի 14-ին Իրանում նախագահական ընտրությունների արդյունքում հաղթել է Ազգային

անվտանգության գերագույն խորհրդի նախկին քարտուղար Հասան Ռուհանին:

**Հայաստանի Գիտությունների ազգային
ակադեմիան դարձել է ALLEA-ի անդամ**

Հունիս 18, 2013 | 15:14



Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան դարձել է Համաեվրոպական ակադեմիաների (ALLEA) անդամ:

ALLEA-ն հիմնադրվել է 1994 թվականին: Այն գիտությունների ազգային ակադեմիաների ֆեդերացիա է, որը միավորում է 40 եվրոպական երկիր: ALLEA-ի անդամ կազմակերպությունները գիտնականների եւ հետազոտողների ինքնակառավարվող միավորումներ են, ինչպիսիք են գիտական հիմնադրամները, հետազոտական ինստիտուտները, նորարարական կենտրոնները եւ գիտական ընկերությունները:

Հայաստանի ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնը հայտնում է, որ ALLEA-ին անդամակցելը հայ գիտնականների համար նոր հնարավորություններ կընձեռնի գիտական փոխանակման, միջազգային հեռանկարային ծրագրերում ընդգրկվելու առումով:

**Փորձագետ. Հայ-իրանական
հարաբերությունները պայմանավորված չեն
Իրանում նախագահների փոփոխությամբ**

Հունիս 18, 2013 | 13:10

Իր նախընտրական քարոզարշավի ընթացքում, արդեն Իրանի նորընտիր նախագահ, Հասան Ռուհանին բավականին խիստ քննադատություն է հնչեցրել, հատկապես Ադրբեջանի հասցեին, հայտարարելով, որ այդ երկիրը սպառնալիք է հանդիսանում Իսլամական Հանրապետության անվտանգության տեսանկյունից: Այս մասին հունիսի 18-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է իրանագետ Վարդան Ոսկանյանը:

«Ռուհանին քննադատել է նաեւ Թուրքիային՝ կապված տարաշաճությամբ առաջատար դիրքեր գրավելու չիմնավորված հավակնությունների հետ: Հայաստանի

հարցում որեւէ հայտարարություն կամ կոչ չի արվել»,- ընդգծել է փորձագետը: Ոսկանյանի համոզմամբ՝ հայ-իրանական հարաբերությունները պայմանավորված չեն Իրանում նախագահների փոփոխությամբ, հարաբերությունները կայուն են, անընդհատ եւ դինամիկորեն զարգանում են: «Այլ կերպ ասած՝ եթե հայ-իրանական հարաբերությունները ավելի չխորանան եւ չամրապնդվեն, ապա հաստատ չեն վատանա: Ամերիկա-իրանական հարաբերությունների հարաբերությունների հնարավոր կարգավորման ֆոնին էականորեն թուլացել է Ադրբեջանի դերը՝ որպես հակաիրանական քարոզչության պլատֆորմի, այսինքն՝ այդ տեսանկյունից Բաքուն կորցրել է Արեւմուտքի համար հետաքրքրությունը», -ասել է Ոսկանյանը՝ հավելելով, որ դա կարող է նպաստել ադրբեջանա-իսրայելական համագործակցության խորացմանը: Ընդհանուր առմամբ, ադրբեջանա-իրանական հարաբերությունները մոտ ապագայում բարելավման հեռանկարներ չունեն: «Դա պայմանավորված է մի քանի նախապայմաններով՝ Բաքվում հակաիրանական տրամադրության առկայություն, Իրանի հյուսիս-արեւմտյան տարածքների նկատմամբ Ադրբեջանի անինաստ հավակնությունները, Իսրայելի հետ բազմակողմանի համագործակցությունը: Էկոնոմիկայում եւս Ադրբեջանը փորձում է իրեն ներկայացնել որպես Էներգակիրների շուկայի խոշոր խաղացողի, անորոշ է մնում նաեւ Կասպից ծովի կարգավիճակը», -ընդգծել է փորձագետը: Նա նշել է, որ երկու երկրների միջեւ խնդիրներն այնքան շատ են, որ հազիվ թե որեւէ նախագահ կկարողանա լուծել դրանք:

Արեւմտյան Վայստամ

Արգելվել է Վանա կատվին Վանի նահանգից դուրս հանել

Մայիս 18, 2013 | 19:48



Վանի հարյուրամյա համալսարանին կից Վանա կատուների ուսումնասիրության եւ պահպանման կենտրոնն արգելել է Վանա կատվին դուրս հանել Վան նահանգի սահմաններից:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Վանի հարյուրամյա համալսարանին կից Վանա կատուների ուսումնասիրության եւ պահպանման կենտրոնը որոշում է կայացրել արգելել Վանա կատուներին նահանգի սահմաններից դուրս հանելը եւ այն որպես նվեր այլ նահանգներ ուղարկելը, քանի որ վտանգի տակ է տվյալ տեսակի գոյությունը:

Կենտրոնի ղեկավար Աբդուլլահ Քայան նշել է, թե իրենք չեն սահմանափակվել միայն կատուների դուրս հանումը արգելելով, այլ նաեւ փորձում են իրենց կենտրոնում գտնվող կատուները համալրել առողջ Վանա կատուներով: Նա նշել է, թե Վանա կատուն նահանգի հարստությունն է եւ այն տեսնել ցանկացողները պետք է այցելեն իրենց կենտրոն:

Նշենք, որ Վանա կատուներն ապրում են Վանա լճի շրջակայքում, որտեղից էլ առաջացել է նրանց անվանումը: Վանա կատվի աչքերը լինում են 3 տեսակի՝ երկնագույն աչքերով, դեղին գույնի տարբեր երանգներով եւ այնպիսիք, որոնց աչքերը տարբեր գույններ ունեն՝ երկնագույն եւ դեղին:

Վանա կատուները շատ համարձակ են, որսում են մկներ, մողեսներ, թռչուններ: Նրանք ուտում են նաեւ մրգեր: Յուրահատուկ են նրանով, որ սիրում են ջրում լողալ: Ավանդույթի համաձայն՝ Վանա կատուները մտնում են Վանա լիճ եւ որսում լճի միակ ձկանը՝ Վանա տառեխին:

Դիարբեքիցի հայտնի հայ երաժիշտը Թուրքիայի միջոցներով ԱՄՆ-ից վերադառնում է Թուրքիա

Մայիս 30, 2013 | 13:21



Դիարբեքիցիում ծնված եւ այնուհետ ԱՄՆ մեկնած ուղի վարպետ Երվանդ Բոսթանջըն հայտնել է, որ Դիարբեքիք տեղափոխվելու իր բոլոր ծախսերն ստանձնելու է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունը:

Թուրքական «Դոդան» լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Երվանդ Բոսթանջըն դիարբեքիցի քուրդ գրող Շեյմուշ Դիքենի հետ Փարիզում այցելել է քուրդ հայտնի գրող Ահմեդ Քայայի գերեզմանին: Այնուհետ այցելել են Բյուրսելում թաղված, «Մերձավոր Արեւելքի սոխակ» տիտղոսին արժանացած Արամ Տիգրանի

շիրիմին եւ հայրենիքի կարոտին նվիրված երգեր հնչեցրել:

ԱՄՆ-ում քրդերենով, թուրքերենով եւ հայերենով ստեղծագործող ուղի վարպետ Երվանդ Բոթանջըն, ով ամիսներ առաջ հայտնել էր, որ լսում է Դիարբեքի քաղաքապետ Օսման Բայդեմիրի կոչին եւ վերադառնում Դիարբեքի, հայտնել է, որ Դիարբեքի տեղափոխվելու ծախսերը հոգալու է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունը:

Թուրքական իշխանությունների կողմից ավերած Մալաթիայի հայկական գերեզմանատան վերանորոգումն ավարտվել է

Մայիս 28, 2013 | 20:01



Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետարանի կողմից 2012-ի փետրվարի 2-ին հայկական գերեզմանատանը կառուցման փուլում գտնվող պահակատան եւ վերջին հրաժեշտի համար նախատեսված շենքերի ավերումից հետո դրանք կրկին վերանորոգվել են եւ շուտով դրանք կհանձնվեն Մալաթիայի հայերին:Թուրքական Taraf պարբերականի հետ զրույցում Մալաթիայի հայ համայնքը ներկայացնող HAYder միության նախագահ Խոսրով Քյոլեթավիթօղլուն հայտնել է, որ գերեզմանատան ավերված շինությունների շինարարությունն արդեն ավարտվել է եւ հունիսի 29-ին տեղի կունենա դրանց բացումը: Խոսրով Քյոլեթավիթօղլուն նշել է, որ այս տարի Մալաթիայի նահանգում տեղի կունենան մշակույթային տուրեր, որոնց ընթացքում մասնակիցները կայցելեն Մալաթիայի հայկական գերեզմանատան նորակառույց մատուռ (վերջին հրաժեշտի համար նախատեսված շենք), վերանորոգման մեջ գտնվող Մալաթիայի Սուրբ Երրորդություն եկեղեցի եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ վանական համալիր, Օրդուգու, Քարաքայայի ջրամբար, Քյուլլուի քարանձավ, Դարենդե Լեւենթ հովիտ, Գյուրփընարի ջրբեժ եւ Շեքիմհանի եկեղեցիներ,

Գյուզելյուրթի հին եկեղեցի, Արաբկիրի եկեղեցի: Նշենք, որ 2012-ի փետրվարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի հանձնարարությամբ քանդվել է Մալաթիայի հայերի գերեզմանուցում կառուցվող պահակատունն ու մատուռը: Այս դեպքը բողոքի ակիբ էր բարձրացրել Թուրքիայում եւ Թուրքիայից դուրս, որից հետո Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թե շինությունները սխալմամբ են քանդել եւ խոստացել պետության հաշվին վերականգնել վնաս

Միջազգային

Թուրք հայտնի գործիչը Աթաթուրքին ֆաշիստ է անվանել

Մայիս 23, 2013 | 13:04



Թուրք գործիչ, ազգային փոքրամասնությունների հարցերով մասնագետ, քրդական հարցի կարգավորման համար Էրդողանի կողմից «Իմաստունների հանձնաժողովում» ընդգրկված Բասքըն Օրանը բնակչության հետ հանդիպումներից մեկի ժամանակ Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին անվանել է կիսաֆաշիստ: Թուրքական «Աքշամ» պարբերականի փոխանցմամբ՝ քրդական հարցի կարգավորման նախաձեռնության շրջանակներում ստեղծված «Իմաստունների հանձնաժողովի» էգեյան հատվածի պատասխանատու խմբի անդամները Մուղլա նահանգում հանդիպել են բնակչության հետ՝ խոսելու քրդական հարցի կարգավորման ընթացքի եւ կարեւորության մասին: Բասքըն Օրանը, խոսելով PKK-ի դեմ պայքարում թուրք զինվորների եւ քուրդ զինյալների զոհերի թվի մասին, Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին անվանել է կիսաֆաշիստ, ինչին խիստ են արձագանքել դահիժում ներկա գտնվողները: Մակայն հանդիպման վարողի խնդրանքով Բասքըն Օրանը շարունակել է իր խոսքը: NEWS.am-ը, հիշեցնում է, որ Բասքըն Օրանը 2008-ին Թուրքիայում «Ներեցեք մեզ, հայեր» ինտերնետ ստորագրահավաքի կազմակերպիչներից էր: «Ներեցեք մեզ, հայեր» ակցիային ինտերնետով միացան Թուրքիայի ավելի քան 30 հազար քաղաքացիներ:

Թուրքական TRT Muzik-ով առաջին անգամ հայերենով տեսահոլովակ է ցուցադրվել

Մայիս 16, 2013 | 14:42



Թուրքական պետական TRT Muzik հեռուստաալիքով եթերում մայիսի 11-ին սկսվել է ցուցադրվել ստամբուլահայ երգչուհի Էրին Թոմասոլուի «Չյունի փաթիլ» երգի տեսահոլովակը: Թուրքական Haberturk-ի փոխանցմամբ՝ Թուրքիայում առաջին անգամ TRT Muzik հեռուստաալիքով սկսվել է ցուցադրվել արեւմտահայերենով երգի տեսահոլովակ: Ստամբուլահայ երգչուհի Էրին Թոմասոլուն դիմել էր TRT Muzik-ին եւ 10 օր անց դրական պատասխան ստացել: Մայիսի 11-ից TRT Muzik-ով ցուցադրվող «Չյան փաթիլներ» երգի տեսահոլովակում երգչուհու խնդրանքով ավելացվել են նաեւ թուրքերեն տիտրեր՝ երգի բառերը թուրք հասարակությանը հասկանալի լինելու համար: «Չյունի փաթիլներ» երգն ընդգրկված է ստամբուլահայ երգչուհու «Տարիներ անց» անունով ալբոմում: Նշենք, որ 2 տարի առաջ ստամբուլահայ երգչուհի Սիբիլ Փեթթորոսոլուի «Նամակ» տեսահոլովակը ցուցադրվել էր TRT-ով:

Թուրքիայում ի պաշտպանություն Գեզի այգու՝ 200 հայ է միացել պայքարին

14/06/2013 19:36:00 lin.am

Թուրքիայում երկու շաբաթ է՝ շարունակվում են ցույցերը՝ ի պաշտպանություն Գեզի այգու, որտեղ ցանկանում են ծառահատումներ իրականացնել և կառուցել առևտրի կենտրոն: Թղթակիցը հայտնեց, որ ի պաշտպանություն այգու՝ 200 հայ է միացել: «Նոր զարթոնք» նախաձեռնության անդամներից մեկը թղթակցի հետ զրույցում նշեց, որ չնայած ոստիկանության բռնություններին, իրենք մասնակցում են ակցիաներին: «Այստեղ հայ, քուրդ կամ թուրք լինելը կապ չունի, Գեզի այգին պաշտպանելը կապ ունի ստամբուլցի լինելու հետ, մեր իրավունքների պաշտպանության հետ», - ասաց «Նոր զարթոնք» նախաձեռնության անդամներից մեկը՝ նշելով,

որ այսօր պուրակի համար պայքարում են հանուն իրենց իրավունքների: Նա ասաց, որ Սուրբ Հակոբ գերեզմանատան համար հուշարձան են բացել, որով շատերն են հետաքրքրվել: Նրա խոսքով՝ այստեղ են հավաքվել հայեր, թուրքեր, քրդեր, աջեր, ձախեր, համասեռամուլներ. «Շատ մեծ խառնուրդ ենք այստեղ, 14 -րդ օրն է՝ այստեղ ենք, Մուսա լեռան վրա 40 օր տևեց պայքարը, Գեզի այգու համար 14 օր է՝ պայքարում ենք»: Նա նշեց, որ, դժբախտաբար, Թուրքիայի մեղիան խայտառակ եղավ այս շրջանում. մինչ Ստամբուլում վայրագություններ էին, մարդիկ էին մահանում, հեռուստատեսությամբ այլ բան էին հաղորդում: Մարդիկ սոցցանցերի, հատկապես «Ֆեյսբուքի» և «Թվիթերի» միջոցով էին տեղեկանում, թե իրականում ինչ է կատարվում: Նա նշեց, որ վարչապետ Էրդողանը դեռ շարունակում է կոպիտ «լեզվով» խոսել: «Այս այգու մենք այլընտրանքային կյանք կառուցեցինք՝ հավասարության պայքարի մի փոքր աշխարհ: Բոլոր քաղաքներին, երկրներին էլ մաղթում ենք նույնը», - ասաց նա:

Թուրքիայում հարգեցին կախաղան հանված ՄԴՀԿ 20 առաջնորդների հիշատակը

15 Հունիսի 2013 - 20:18



Այսօր՝ Ստամբուլի ժամանակով ժամը 15.00-ին, Սուլթան Բայազետ հրապարակում հավաքվել էին ՀՀ-ից եւ Լիբանանից ՄԴՀԿ պատվիրակությունը, հայ եւ թուրք մտավորականներ, իրավապաշտպաններ եւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ստամբուլից HayNews.am-ի թղթակցի փոխանցմամբ՝ Սուլթան Բայազետից հետո խմբի մի մասը մեկնեց Գեզի զբոսայգի, որտեղ նրանց ընդունեցին «Նոր Զարթոնք» հայկական կազմակերպության անդամները, ովքեր զբոսայգում ունեն իրենց վրանը: «Նոր զարթոնքի» տաղավարի վրա կախված էր Փարամազի լուսանկարներն ու ծաղիկներ: Նախ ամբողջ զբոսայգով հատուկ բեմից հայտարարվեց, որ նման միջոցառում կա, ապա «Նոր Զարթոնքի» դիմաց ելույթով հանդես եկան Քաղիբ Աքընը, ապա՝ նաև Ալեքսան Քոչքերյանը : Զբոսայգում հարյուրից ավել մարդ էր լսում նրանց ելույթները. այդ

ընթացքում բաժանվում էին թուղթեր, որոնցում կախադան հանված ՄԴՀԿ 20 առաջնորդների մասին տեղեկություններ էին: Ելույթների ավարտից հետո ներկաները մեկ րոպե լռությամբ բռունցքները վեր պարզած հարգեցին նահատակների հիշատակը, այնուհետև միջոցառման կազմակերպիչները հարցազրույցներ տվեցին լրատվամիջոցներին: Այս ընթացքում որևէ միջադեպ չգրանցվեց, անցավ խաղաղ՝ փոխադարձ հարգանքի մթնոլորտում:

Հալեպի հայաշատ թաղամասերը հրթիրակոծվել են. կա մեկ վիրավոր

14/06/2013 12:18:00 1in.am

Հունիսի 13-ին Հալեպի հայաբնակ շրջանները հրթիրակոծության են ենթարկվել, ինչի արդյունքում մեկ հայ վիրավորվել է: Այս մասին գրում է yerakouyn.com կայքը: Կեսօրվա ժամերին մոտ 10 հրթիռ է արձակվել Հալեպի հայաշատ Սուլեյմանիե և Նոր Գյուլ թաղամասերի վրա՝ վնասելով մի շարք շենքեր: Կայքը տեղեկացնում է, որ օրեր առաջ գոհվել է սիրիական բանակի զինծառայող 1991 թ ծնված Հայկ Ֆուատ Հակոբը: Նրա մարմինը հողին է հանձնվել հունիսի 10-ին Լաթաքիայում:

Հասան Ռոհանին Իրանի նոր նախագահն է



Իրանի ներքին գործոց նախարարը Հասան Ռոհանինին է 11-րդ նախագահական ընտրությունների հաղթողը հայտարարել:

Շաբաթ երեկոյան լրագրողների հավաքում, Իրանի ներքին գործոց նախարար Մոստաֆա մոհամմեդ Նաջջարը հայտարարել է .-«ԻԻՀ-ի 11-րդ նախագահական ընտրությունների թեկնածու Հասան Ռոհանին շահելով 18 միլիոն 613 հազար 329 ձայն և ձայների բացարձակ մեծամասնությամբ, Իրանի նոր նախագահ ընտրվեց:

Իրանի ներքին գործոց նախարարն ավելացրել է .- Իրանի ընտրությունների շտաբի կենտրոնական

գործադիր խմբի տվյալներով, ընտրությունների քվեների ամբողջական թիվը 36 միլիոն 704 հազար 156-ն է եղել:

Մոհամմեդ Նաջջարն ասել է, որ քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների 72 տոկոսը մասնակցել է ընտրություններին: Իրանի ներքին գործոց նախարարը նշել է .-Իրանի ժողովուրդը բառիս բուն իմաստով քաղաքական սխրանք գործեց:

Ուկրաինայի հասարակական կազմակերպությունները կոչ են անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Հունիս 19, 2013 | 11:38



Ուկրաինայի հասարակական կազմակերպությունները ողջունում են Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքի նախագիծը Գերագույն ռադայում ներկայացնելը: Analitika.at.ua-ի խմբագրությունում ստացվել են ՀԿ-ների կողմից երկրի նախագահին, խորհրդարանի նախագահին եւ պատգամավորներին ուղղված նամակների տեքստերը:

«Նարոդնա Ռադա» ՀԿ-ն, որը միավորում է Ուկրաինայի 4500-ից ավելի կազմակերպությունների, դիմել է Ուկրաինայի նախագահին, Գերագույն ռադայի նախագահին եւ խորհրդարանականներին՝ խնդրելով աջակցել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքի նախագծի ընդունմանը, որը մշակել են ժողովրդական պատգամավորներ Վիլեն Շատվորյանը եւ Արսեն Ավակովը:

Նախօրեին Ուկրաինայի նախագահին ուղղված նամատիպ կոչով հանդես էր եկել «Քաղաքացիական միություն» միջազգային ՀԿ-ն:

Հիշեցնենք, հունիսի 6-ին Ուկրաինայի Գերագույն Ռադայում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագիծ էր գրանցվել: Օրինագծի հեղինակներն են Արսեն Ավակովը (Բատկիվշինա), Վիլեն Շատվորյանը եւ Նվեր Միխիարյանը (Ռեզիոնների կուսակցություն):

Գրեթե բոլոր սոցիալական ցանցերը գաղտնավորում են՝ սկսած սկայպից վերջացրած Facebook-ով. փորձագետ

Հունիս 19, 2013 | 13:25



